ԳԱԻԱՌԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՄԵՐ ԿԵԱՆՔԻՑ

V

Վերանորոգող հայ ընտանիքի այժմեան դրութիւնը մի երկու կողմից թեթև կերպով նկարագրելուց յետոյ, ես վերջացրի իմ խօսքերը ասելով, որ այդ ընտանիքը չունի հաստատ յենակէտ, հողմահարւում է ամեն կողմից, ընդունում է ամեն գոյն և ենթարկւում է ամեն տեսակ հոսանքի։ Ապա տեսանք նահապետական ընտանիքը, իմացանք որ այդտեղ կայ միաւորող, մի ամբողջութիւն կազմող դրութիւն, որ բացարձակապէս իշխում է ամենքի վերայ իբր մի հնադարեան օրէնք իւր բոլոր խստութիւններով։ Ես մինչև անգամ համարձակւեցայ յայտնելու, որ եթէ ունենանք բարի կամք, կարող ենք այդ նահապետական աշխարհից դուրս բերել մեզ համար գեղեցիկ իդէալներ։ Ինչպէս սպասում էի, իմ բարեկամներից և ընկերներից մի քանիսը յայտնեցին ինձ իրանց անբաւականութիւնը, առարկելով թէ այդպէս ձևակերպելով դրութիւնը, այդպիսի գոյներ տալով ժամանակակից երևոյթներին, ես բացարձակ ուրանում եմ որ լուսաւորութիւնը անհրաժեշտ է, որ մենք չը պիտի կերպարանափոխւենք, այլ պիտի շարունակենք վաղեմի անշարժութեան մէջ մնալ։ Ինձ համար զարմանալի չէր իմ ասածի այդ տեսակ բացատրութիւնը. ես ասել էի որ մենք այժմեան ժամանակները խիստ շատ և մանր զոհեր ենք տալիս լուսաւորութեան գործին. զոհում ենք մեր մայրենի լեզուն, մեր դաղափարները, մեր մարդկային պարտաւորութիւնները. մենք անհաշիւ քանդել ու կերպարանափոխել ենք պահանջում և մեր ականջին շատ վատ է թւում այն ձայնը, որ համարձակւում է փիշեցնել թէ ամեն բան քանդելով մեզ համար նիւթ չի մնալ նոր շինութիւն կառուցանելու համար։ Բայց ինչո՞ւ են թափւում կոկորդիլոսի արցունքները... Ինչո՞ւ է լանդգնութիւն համարւում մեր ժամանակակից կեանքի տուած դասերը նկարագրելը։ Մենք ապրում ենք մի այնպիսի ժամանակ, երբ պահանջում է խիստ քննադա-

տութիւն, երբ դիակը ոչ թէ ողբում են, որ նա փտել է դաղրալի վէրքերից, այլ սառնասրտութեամբ անդամահատում, քննում ամեն կողմից։ «Այժմ ամեն ինչ քննադատութեան պիտի ենթարկուի, նոյն իսկ ինքը, քննադատութիւնն էլ» ասում է Բէլինսկի։ Քննադատութիւնը կը պարզէ թէ կեանքից այս ու այն բարեփոխում պահանջողները իրանք ի՞նչ են տալիս կեանքին, թէ ինչ կայ, ինչ պիտի անենք և ինչ ենք անում։ Ես առաջ կը տանեմ իմ նկատողութիւնները, որոնք գուցէ աւելի օգտակար կը լինեն, քան իմ բարեկամների տհաճութիւնը, երեմիական ողբերը։

Այս անդամ ես վստահանում եմ ձեռք վերցնել մի դէպք, որ երկար ժամանակ լուզել է Շուշու հասարակութիւնը։ Անցքը արտասովոր անցք էր, որ այդ պատճառով բազմեց լրագրութեան էջերում (տես Մշակ, Նոր-Դար, „Новое Обозрѣніе", „Кастій" և այլն)։ Ես խօսում եմ այն հալ օրիորդի մասին, որ մի թուրք փողոցային տղայի ազդեցութեան ենթարկուելով, գիշերը թողել է իւր հայրական տունը և իւր անձը նուիրելով իւր տարփական կրքերին, ողջ ողջ մեռած անդամ է դառել իւր հասարակութեան համար, կորցրել է անուն ու յարգանք, անբախտացել։ Վերին աստիճանի հետաքրքրական երևոյթ է։ Մի ժամանակ, բռնութեան խաւար դարերում, երբ հպատակը տիրողի ստրուկն էր, հալ աղջիկը շատ և շատ անդամ էր մահմեդականի կրքին զոհ տալիս իւր անունը, իւր պատիւը։ Բռնութիւնը, յայտնի է, իրաւունքի պատիւ չի ճանաչում։ Բայց ժողովուրդը, որքան կարողանում են վկայել պատմական փաստերը, ստրուկ լինելով հանդերձ այնքան սիրում էր իւր իրաւունքը, պաշտպանում էր խտրութիւն ճանաչելու կարողութիւնը, որ հաշտում էր օրիորդի անպատուութեան իրողութեան հետ երբ տեսնում էր որ այդտեղ խտրութիւնը, ատելութիւնը այն աստիճան զօրեղ է, որ բռնաբարողը զոհ է դառնում, մի զոհ, որի ոչ միայն պատիւը, այլ և կեանքը բռնի ուժի տակ խորտակւում է։ Այդ մի դրութիւն էր, որ հերոսական առաքինութիւն ցոյց տալուն էր նպաստում։ Նա զոհի համար պատրաստ էր կարեկցութեան մի ցոյց. պատմութեան մի տող, ժողովրդի բերանի աւանդութիւն, մի ժամանակաւոր ափոսանք, վերջապէս մի բանի կաթիլ արտասունք։ Այդ ցոյցերով սրբւում էր զոհը, արդարանում, սիրուն լիշատակի արժանանում։ Իսկ այժմ, երբ չը կայ ստրուկի պատկերը, երբ ամեն մէկը քաղաքացիական լիակատար իրաւունք վայելող անհատ է, պատահում է վերոլիշեալ դէպքը։ Յայտնւում է որ օրիորդը իւր կամքովն է դնացել թուրքի ետևից, իմանալով թէ ուր է գնում։ Օրէնքը իւր դործը կը տեսնէ. օրէնքի առաջ թուրքը մեղաւոր է, քանի որ աղջիկը չափահաս կոչւելու համար որոշած տարիների թիւն չի հասել, նոյն իսկ աղջկայ համաձայնութիւնը այդ դէպքում բաւական չէ, այդ տարիներում նորա անձնատուր լինելը բռնաբարումն է համարւում։ Օրէնքը, ուրեմն, իւր պատիժը կը հասցնէ։ Բայց այդ, իհարկէ, բաւական չէ։ Որքան խիստ լինի պատիժը, նա չի կարող հանդցնել այն լուզմունքը,

որ առաջացրել է կրօնի, աղգայնութեան գաղափարը։ Հայ հասարակութիւնը վիրաւորւած է որովհետև մի մահմեդական կարողանում է մի քրիստոնեայ հայ աղջկան խելքից հանել, համարում է այդ դէպքը բարոյական և կրօնական անկման մի նշան, իսկ մահմեդականը խորին բաւականութիւն արտայայտող ժպիտով գլուխ բարձրացրած ասում է, որ քրիստոնէութիւնը իւր բարոյական հիմնարկութիւններով չի կարող դիմանալ մահմեդականութեան առաջ։ Ինչպէս տեսնում էք, ծանրակշիռ հարցեր են յուզւել։

Այդքան մեծ, վճռական նշանակութիւն տալ այդ դէպքին, ի հարկէ, չի կարելի։ Դա մի մասնաւոր երևոյթ է։ Անհատը մի համայնքի, մի հասարակութեան մի աննշան մասն է և հասարակութիւնը ամեն դէպքում համերաշխ է անհատի սոսկական պատկերի հետ։ Сѣмья не безъ урода, ասում է ռուսը և այդ բաւական է։ Իրողութիւնը այդ տեսակէտից լուսաբանելու և այս կամ այն վճռին հասնելու համար չէր որ ես ուշադրութիւն դարձրի այդ արտակարգ դէպքի վերայ։ Ո՛չ, մեզ ամենից շատ պիտի հետաքրքրէ ոչ թէ ամբոխի այդ կարծիքը, այլ իրողութեան պատմութիւնը. նա անշուշտ ունեցել է իւր նախապատրաստութիւնը, իւր հողն ու շրջանը, ուր հաստատւել է, մի յայտնի կերպարանք ստացել, զարգացել ու կրիզիսին հասել։ Ճանաչելով այդ բոլորը, մենք կը գտնենք մեր հարազատ սեփականութիւնները, կը տեսնենք մի հետևանք, որի պատճառները տրրւած են մեր մէջ և մենք չենք կարող այդ պատճառները մերը չը համարել։

Արդ՝ ինչպէս է գլուխ եկել այդ կրիզիսը։

Նահապետական ընտանիքի մասին խօսելիս ես ցոյց տուեցի թէ ինչ հասկացողութիւն է օջախը և ինչ է նա անում իւր պաշտօնը լաւ կատարելու համար։ Մենք տեսանք, որ իբրև մի հնադարեան հիմնարկութիւն, օջախը ջախջախում է անհատի կամքը. բռնութիւն է գործ դնում, փչացնում է մարդուն, դարձնելով նորան մի արարած, որ սովական միտք, հաչեցք հասկացողութիւն ունենալ չի կարող. այդ մարդու առաջ, որ լատկապէս կինն է, կալ միայն մի հաստատւած օրէնք և այդ օրէնքը նա պիտի ճանաչէ անտրտունջ, առանց որ և է բողոքի։ Այդ տեսակ ստրկական հարստահարութիւնը, որքան և բարի խորհուրդ ունենար, չէր կարող դիմանալ մեր դարի պահանջներին։ Եւ մենք տեսանք որ վերանորոգւող ընտանիքը հեռացրել է իրանից այդ չղթաները։ Այդ ընտանիքի անդամները աւելի ազատ են, չեն զոհում իրանց կամքն ու կարողութիւնը հին դարերի խաւար ժառանգութեանը։ Շատ լաւ, մի քայլ դէպի առաջ։—Ընտանիքը, որի մէջ մեծացել է մեր վիշած տիրահուչակ հերոսուհին, այդ քայլն արած ընտանիքներից է։ Փողոցում թառ, զարմանք ածող պարապ թուրքը կարողանում է ազատ մտնել այդ տունը իւր արհեստը տան տղային սովորացնելու համար։ Ուրեմն այդ ընտանիքում հասկացւում է նաև երաժշտութեան նշանակութիւնը, գեղեցկութիւնը։

Այդ նախերգանքն է։ Այնուհետեւ, երբ թուրքը վերջացնում է իւր երաժշտական դաստիարակութիւնը, նորա և տան օրիորդի մէջ սկսւում է բարեկամական յարաբերութիւնը. նրանք միմիանց հետ ազատ խօսում են և ոչ ոք նրանց չի արգելում, գիտեն որ օրիորդը կարող է բաց երեսով խօսել, ծանօթանալ, դուրս դալ տանից և տուն գալ առանց պահապանի, առանց հսկողութեան։ Չէ՞ որ միայն վիմար հնութիւնն է, որ արգելում է այդ բոլորը։ Այդ ազատութիւնը, դարուս այդ լուսաւոր գաղափարը հովանաւորում է մի կողմից կիսավայրենի, կլքոտ թուրքին, միւս կողմից վերանորոգող հայ ընտանիքի մի անդամին։ Տարիների ընթացքում հաստատւում է մի դրութիւն, որ սիրային անունով են մկրտում մեր, չափազանց զգայուն, հոգեբանական կնճիռներ լուծելու վերայ տանջւող մանրիկ վիպասանները։ Լաւ փչեցէք—տարիների ընթացքում... Մեծ փողոցի վերայ կանգնած տան պատուհանը յաճախ բաց է լինում. պատուհանում մի գեղեցկադէմ օրիորդ է նստած, փողոցում կանգնած է երաժիշտ թուրքը. նրանք միմիանց նայում են, միմիանց ողևորում։ Իմացէք, խնդրեմ, ովքեր են դրանք։

Թուրք երաժիշտ, երգիչ... կայ արդեօք մի ուրիշ բառ, որ դրանից աւելի լաւ բացատրէ մի անբարոյական, ընկած մարդու պատկերը։ Թուրքի քնարը յաւտնի է մեզ, նորա կամաւոր սիրահարներիս։ Նա ամբողջապէս կիրք է, տանջանք. նա ամբողջապէս նուիրւած է կնոջ մարմնին, կնոջ մերկութեանը, միայն մարմին, կիրք յարուցանող, վառող գիրք, մերկութեան այս կամ այն չչացնող տեսարան—ահա այդ քնարի ամբողջ նշանակութիւնը, միտքը։ Մի որոնէք այդ սիրային զառանցանքների մէջ հոգու պատկեր, վսեմութիւն, որ գործ չունի մարդու անասնական կրքերի հետ, այլ պիտի սրտին, հոգուն վայելչութիւն տայ։ Թուրքը երբէք այդ տեսակ մի վսեմ, բարձր նշանակութիւն չի տալ կնոջը. նորա կրօնը կնոջը տուել է այդ կրքերը յագեցնելու նշանակութիւն միայն. «կնոջը տեսնում ես, իսկոյն պիտի գրկես, եթէ ոչ, ուրիշը կը գրկէ». ահա մահմեդականի վերջնական հասկացողութիւնը։ Այդ ասում է նա հասարակ պրօղալի մէջ, այդ մի և նոյնը երգում է նորա քնարը։ Ահա թրքական մուսալի իսկական լեզուն։ Այդ մուսան տիրում է մեզ, բոլորիս. մեր ողևորութիւնը դա է, մեր ճաշակը դեղեցկի և սիրելու մասին այդպէս ենք արտայայտում։ Ամբողջ Ղարաբաղում չը կայ հայի տուն, ուր ընդունւած չը լինի այդ մուսան. մեր մանուկներն անգամ ամեն օր երգում են այդ տեսակ բաներ և անասելի քաղցրութիւն են պատճառում իրանց ծնողներին։ Բարձրագոյն ուսման տէր մարդիկ անգամ անտարբեր մնալ չեն կարողանում և լաւած ուշադրութեամբ են վարձատրում այդ մուսային։ Աշխարհիս զօրեղները, այն մարդիկ, որոնք հասարակութեան օրինակ դառնալ, մարդկանց ղեկավարել են ուզում, պատրաստ են համբուրել այն բերանը, որ երգում է այդպիսի մի ախտաւոր մուսայի բորբոսնած ներշնչանքը։ Դուք, սակայն,

տեսնում էք որ դա բանաստեղծութիւն չէ, այլ Պարսկաստանի կիսող արեզակի տակ չչկլուած գլխի մէջ, տակն ու վերայ դառած անճոռնի, հիւանդոտ երևակայութեան արդասիք, որ բոլոր անասնական կրքերի հաւաքածուն լինելով, վկայում է թէ ինչքան ցնցուած, գրգռուած ջղերի տէր է այն ազգը, որ այնպիսի բաներ է հանում իւր բերանից, թէ որքան վատ է անկիրթ, անճաշակ ազգի կատաղի կերպով լափող, ոչնչացնող բնութիւնը։ Եւ մենք, հայերս ենք, որ հաւասար չափով վարակուած ենք այդ անճոռնի ցնորքներով, մենք ենք որ կրկնում ենք նոյնը, վարձատրում ենք այդ քնարին ծառայողներին մեր ամբողջ կարողութեամբ, մեր գրպանի առատ ընծաներով։ Ո՞վ է դա, որ այդպէս պատիւ, համակրանք է վայելում։ Նայեցէք, ահա նա կանգնած է պատուհանի տակ և ոգևորում է հայ աղջկան։ Ապահով լինենք, որ նա ուրիշ լեզու, ուրիշ կարողութիւն չունի, բացի իւր քնարի լեզուից և չենք հասկանալ թէ ինչն է ոգևորել, գլխից հանել դարուս քաղաքակրթութեան զաւակին։ Դա, մեր վերանորոգող ընտանիքի փափկասուն զաւակը, մեծ փորձանքի է ենթարկուած. նա ազատութիւն ունի, նա անարգել չփնում է այդ հրատապ, ապրող կրքերի հետ. և ինչով պիտի պաշտպանուի։ Ահա հարց, դժուարագոյնը մեր բաղմաթիւ հարցերի մէջ։ Պարապ, անգոյն կեանքի մէջ, որ մատնել էր նորան մի մտաւոր դատարկութեան, ոչ ոք նրան չի տուել կարողութիւն հասկանալ իւր ոգևորութեան պատճառը, չի եղել քննողական լուրջ ինքնաճանաչութիւն, որ հաշիւ տար նրան թէ ինչ է նա լսում և ինչ ունի այդ լսածի դէմ ասելու։ Նա գրագէտ է, նա գուցէ կարդացել է այն սաստիկ բողոքները ծնողական բռնութեան դէմ, որ մեր վիպական զոհերն են արձակում ճնշուած սէրը ողբալու համար։ Նա գիտէ միայն, որ բռնութիւնը վատ բան է, բայց թէ ինչպէս պիտի պատրաստէ իւր ազատ սիրտը—այդ նա չը գիտէ, այդ գէպքում նա նոյնն է, ինչ որ էր առաջներում, երբ նորա վերայ կար բռնութիւն, որ պինդ ծածկում էր նորա երեսը, տան պուճախումն էր նստացնում։ Անպատրաստ հողը իւր ուզածին պէս հերկեց թուրք երաժիշտը, բոլորովին պատահական հոսանքը բռնեց պարապ, աննպատակ մարդու սիրտը։ Եւ երբ այդ ամենից յետոյ իրողութիւնը կատարած է, ամենքը ապշում են, յուզւում։ Այդպիսի մի պատրաստութիւն ունէր այդ անցքը, որ թուրքին իւր համայրիների մէջ հերոս է շինել, իսկ հայ աղջկան ներկայացրել է իւր հասարակութեան իբրև մի ծայրաստեղ անկարելիութիւն։ Հարցրէք այս վերջինիս. ինչ հարց կարող էք տալ նրան, ինչպէս կարող էք նորա քայլը դատապարտել։ Նա չի վարագուրում, չի ծածկում, այլ կացնում է ձեր ճակատին անողորմ պատասխան. «ինչ վայրենի մարդիկ էք, ես ասում եմ, որ սիրահարած եմ»։ Սէրը հերոսութիւն է տալիս մարդուն, սէրը մի և նոյն ժամանակ կոյր է. մի վճիռ պէտք է, վերջապէս, արձակել։ Հերոսուհին կամ պիտի արդարանայ, համարի զոհ հասարակական և ընկերավարական սխալ դրութեան (խօսելով Պօլսի սի-

բարարբոք հեղինակների լեզուով), կամ թէ սէրը պիտի ուրացուի, արուաքսուի։ Ոչ մէկը չի կարելի անել. Մնում է, ուրեմն, ուրիշ կողմից նայել անցքի վերայ։ Ամբոխը դատապարտում է հերոսուհուն և ոչ միայն խաւար, անհասկացող ամբոխը, այլ և այն դասակարգը, որ կարողութիւն ունի հանդամանքները կշռելու, սրան, մաքի էութիւնը հասկանալու։ Այդ ամբոխը դատապարտում էր և Տուրգենեի Ելենային, երբ նա թողնելով հայրական տունը, իրան պաշտող երիտասարդներին, մի ինչ որ բուլդար ուսանող Ինսարովի հետ գնում էր դէպի թշուառութիւն, դէպի մի աշխարհ, ուր զրկանքն ու աղքատութիւնն էր նորան սպասում։ Բայց միթէ ամբոխը այդ դէպքում արդար էր... Որքան վսեմ, սուրբ, պաշտելի է այն զաղափարը, որ հերոսուհին է տալիս Ելենային. որքան անգրկելի լայն, փառահեղ է այն աշխարհը, որ բացւում է մեր առաջ, երբ մենք մի առ մի զգում ենք այդ օրիորդի սրտի զարկերը, երբ մեղ դիպչում է նորա շունչը, որ այդպէս լաճախ ընդհատւում է նորա սրբազան ողորմութիւնից։ Այդ սէրը մի ամբողջ կեանք է, գեղեցիկ, երանելի կեանք։ Ամբոխը դատապարտել է նորան, բայց վերջը կը պաշտէ, երբ լաւ կը հասկանայ թէ այն ինչ ողորմութիւն էր, որ նորան հեռու աշխարհ էր տանում։ Ելենան լափշտակւել էր, տեսնելով մի խեղճ, բայց վերին աստիճանի ազնիւ ուսանող, որ ողորմած է իւր թշուառ հայրենիքի ազատութեան զաղափարով, որ պատրաստւում է վրէժ հանել այն բռնաւորներից, որոնք անպատուել էին նորա հայրական տունը, լափշտակել էին նորա հայրենի սեպհականութիւնը, իրանց վաւաշոտ գիրկն էին դցել նորա անպաշտպան մորը, սպանել էին հորը։ Այդպիսի մարդուն է նուիրում Ելենան, և գնում է նորա հետ լաժանելու բոլոր թշուառութիւնները, բոլոր տանջանքները, որպէս զի նորա հետ վերջ ի վերջոյ տեսնէ մարդկային արդար իրաւունքի լաղթութիւնը, ստրուկ ժողովրդի ազատութիւնը։ Դարեր կ'անցնեն, բայց քանի որ զոյութիւն կ'ունենայ մարդկային սիրտ, այսպիսի անձնուիրութիւնը պաշտելի, խնկելի կը մնայ. Դրանից լետոյ նայեցէք հայ աղջկան, որ ամբոխի դատապարտութիւնից ազատ մնալու համար նոյն բառն է գործ ածում—սիրահարութիւն։ Քննեցէք այն ամենը, ինչ ծնեցրել է այդ սէրը—և չ'ք ողբալ... Միտք, ընդարձակ, հոգի զարձացնող միտք չը կայ այս դէպքում. նա նուիրում է մէկին լոկ այն պատճառով, որ այդ մէկը հասկացնում է նորան թէ նա գեղեցիկ աղջիկ է, փառաբանում է նորա կազմածքը, նորա այն կարողութիւնը, որ կիրք է լարուցանում, անքնութիւն է պատճառում...

Ես դարձեալ պիտի կրկնեմ, որ այդ խելացի երեսոյթը և նրանից ծագած հետևանքը ինձ չէ հետաքրքրում, ես հետաքրքրւում եմ այդ երեսոյթի պատրաստութեամբ. հեռու պահելով թթու աղդասիրութիւնից, ես չեմ վրդովւում այդ դէպքից, այլ երկրին հանդարտ նայելով դանում եմ, որ մեր կեանքի կազմածքը պատրաստում է այդպիսի զոհեր, որոնք ոչ

միտք ունին, ոչ էլ մի համակրանքի, մի ցաւակցութեան են արժանանում։ Խնդիրը թուրքի անձնատրութիւնը չէ, ես համոզած եմ, որ նորա դերը կարող էր կատարել և մի փողոցային ապականած հայ տղայ, որը սակայն հայ քահանային «Օրհնեա տէր» է ողջունում. և այդ դէպքում էլ ինձ համար մի և նոյն կերպով ցաւալի կը լիներ այդ երևոյթը։ Փառք տուէք հայ աղջկայ աղատութեան—պատիւ ձեզ։ Բայց տուէք նրան նաև հասկացողութիւն, տուէք նրան վսեմ գաղափարներ, տուէք նրան ամուր զէնքեր, որոնցով նա իւր անձը, իւր դեղեցկութիւնը ծառայեցնէր մարդկային կեանքի իդէալական զեղեցկութեանը։ Ես այս ասում եմ ոչ միայն այս դէպքը ի նկատի առնելով։ Ո՛չ։ Ժամանակի երևոյթ է, որ հայ օրիորդները հասկանում են թէ ինչ է սէրը, ինչ յատկութիւն ունի նա, ինչ տեսակ կեանք է պատրաստում։ Բայց այդ սէրը նրանք արտայայտում են այնպիսի երեխայական անմիտ ձևերով. այնպէս շուտ փոխում են մի սիրատանջ էակի կեղևը և առհասարակ այնպէս են վարում իրանց զգացմունքի հետ, որ ակամայ խղճում ես թէ իրանց. այդ օրիորդներին, և թէ իրանց սէրը։ Իրաւ որ ապացոյցներ շատ կան և ես լոկ խօսքեր չեմ ասում... Ումին է մնում ժամանակի այդ պտուղը, սիրոյ զգացմունք հասկանալը ուղղել այնպէս, ինչպէս հարկաւոր ենք համարում մեր երջանկութեան համար։ Դպրոցից չը պահանջենք. դպրոցը պատրաստութիւն տալ չի կարող։ Ի՞նչ է մեր դպրոցը. նա միայն գրագիտութիւն է սովորացնում, նորա օգնութեամբ մարդ կերպարանափոխել չէք կարող։ Մնում է ընտանիքը...

Ասում են թէ այդ գրութիւնը անցողական է, թէ նա կը փոխուի, թէ անբնական երևոյթները, որոնք տխուր եզրակացութեան են հասցնում անհրաժեշտ են, անխուսափելի անցողական դրութեան մէջ գտնուող ժողովրդի համար։ Շատ լաւ, պարոններ. թող տուէք որ հետաքրքրուողը նկարագրէ այդ դրութիւնը, թող տուէք լաւատեսութեան թմրութիւնից քիչ ազատ մնալ և հետաքրքրուել թէ անցողական դրութեան մէջ գտնուող ժողովուրդը ինչ մի բան է տեսնում իւր առջև, որին առաջնորդ ընտրէ, որին հետևէ. որն է այդ լուսաւոր աստղը, որ մեզ ապահովութիւն է տալիս որ մենք վերջը փոթորկալից ալիքներից դուրս կը գանք, կը դիմենք դէպի ցանկացած կէտ նպատակին։ Այդ հարցը հետաքրքրական է և իրաւունք է տալիս մեզ հարցնել, իմանալ թէ ինչ ենք անում, փրկութեան ինչ խարիսխ ենք շինում։ Այսպիսի հարց կրկնելիս միշտ իմ առաջն է գալիս մի անմոռանալի տխուր միջատակ, որ մեր մտաւոր սնանկութեան անջնջելի արձաններից մէկն է։ Ահա պատմեմ։

1883 թուի ձմեռը ես ընտրած էի Կովկասի Բարեգործական ընկերութեան Շուշու տեղական ճիւղի կողմից անդամ մի յանձնաժողովի, որին յանձնուած էր մշակել, պարզել թէ ինչ տեսակ իդեական արհեստագիտական դպրոց կարելի է ունենալ Շուշում, ինչ նպատակ և ինչ պայմաններ պի-

ալ ընտրէ, որքան ծախք է պահանջում և ինչ ծրագիր պիտի ունենայ։ Ընկերութեան ընդհանուր ժողովը, որ ընտրում էր այդ չանձնաժողովի անդամներին բուռն ոգևորութեան մի տեսարան էր ներկայացնում. արհեստագիտական դպրոցը պիտի բանար ընկերութիւնը և ինչ գեղեցիկ գործ. աղմկալից վիճաբանութիւնները, երկար ու ձիգ ընդդիմախօսութիւնները, ամեն մէկի սաստիկ ցանկութիւնը հաղորդել իւր իմացածը, իւր միտքը, կարծիքը մարդ էին զարմացնում. միթէ, հարցնում էր մարդ իրանից, կան մեր մէջ այդպիսի ուսումնարաններ և մենք գործնականապէս ծանօթ ենք նոցա տուած արդիւնքների հետ, երբ այսքան ոգևորւում ենք, տաքանում։ Ուրախալի երևոյթ էր. այդպիսի համակրութեան գուցէ տեղային ոչ մի հասարակական գործ չէր արժանացել։ Մենք էլ, չանձնաժողովի անդամներս, թւով 7 հոգի, ոգևորւած տաք կերպով կպանք գործին։ Մօտ տասն նիստ ունեցանք, խնդիրը չօշափեցինք բոլոր կողմերից։ Անմոռանալի են այն ժամերը, երբ մենք հաւաքւում էին տաք սենեակում, նստում էինք մեծ սեղանի չուրջը և հերթական հարցը առաջ բերելով, սկսում էինք խօսել, վիճել, միմեանց կարծիք ջրել, համաձայնութեան չէզօք կէտերը որոնել, մէջ տեղ դնել։ Մենք չէինք իմանում թէ ինչպէս են թռչում ժամերը, մենք կարծում էինք թէ գործին քիչ ենք նվիրւում։ Օ՛, երիտասարդական ոգևորութիւն... Կարելի է միթէ նկարագրել այն հրճւանքը, հոգեկան այն բուռն լուզմունքը, որ ամենքիս գերում էր, երբ հետզհետէ դուրս էր գալիս մի անլայտութիւնից և ձևակերպւում էր մեր աչքի առաջ մեր դպրոցի պատկերը իւր կաղմւածքով, իւր նպատակով։ Նպատակն էր—տարածել արհեստը քաղաքի հայ աղքատ դասակարգի մէջ, որով այդ դասակարգը իւր գոյութիւնը ապահովելու մի զօրեղ միջոց կունենայ. արհեստի հետ զուգընթաց պիտի գնար, ի հարկէ, և ուսումը։ Մենք այդ նպատակին լարմար ծրագիր կաղմելու համար պիտի ծանօթանայինք մեր ժողովրդի կարիքների հետ, պիտի ուսումնասիրէինք մեր կեանքը, մեր ինչ լինելու հարցը։ Լինում էին դեռ անփորձ երիտասարդներ, որոնք մեր կեանքի, մեր պահանջների մասին շատ թեթև, շատ հարևանցի հասկացողութիւն ունէին. մենք դրանց լսում էինք քաղցրութեամբ և իսկոյն ջրում էինք այդ վարդադոյն, քնքուշ հայեացքները իրականութիւնից դուրս բերած մեր կոպիտ ու անտաշ փաստերով։ Եւ որպէս զի միակողմանի չը լինենք, որպէս զի աննչան հարցը մեծացնելով կարեւորը չը մոռանանք, մենք հրաւիրում էինք կողմնակի մարդկանց։ Գալիս էին տիկիններ և երիտասարդներ, մասնակցում էին մեր վէճերին, ցոյց էին տալիս մեր սխալները և խրախուսում մեր աշխատութիւնը։ Մի խօսքով, երեք չարաթ շարունակ մենք ամեն ինչ մոռացել էինք, ամբողջապէս նվիրւել էինք այդ գործին։

Ամեն ինչ վերջացաւ, պէտք էր հաստատ կերպարանք ստացած դպրոցի նիւթական ապահովութեան հարցը վճռել։ Ընկերութիւնը չունէր

միջոց առանց կողմնակի օժանդակութիւնների դպրոցը պահպանելու։ Պէտք էր ընկերութեան արդիւնքները չատացնելու մասին մտածել։ Դուք գուցէ ծանօթ չէք այն դրութեան հետ, որի մէջն է լինում մի մարդ, որին լանձում են ոչնչից մի բան դուլացնել. Գաւառական այնպիսի չրջաններում, ուր չը կալ համերաչխութիւնը, մահացու հարուած է տալիս ամեն մի բարի մտքի, չատ և չատ նեղ է այդ դրութիւնը։ Գործիչը ամբողջ իւր էութեամբ համոզուած է որ պէտք է մի գործ կատարել, պէտք է ճանապարհ բաց անել այդ եսասէր և անտարբեր ժողովրդի մէջ. նա ամեն օր լսում է իրաւացի լանգիմանութիւններ թէ ոչինչ չեն անում, թմրած մնացած են և այլն։ Եւ ահա երբ նա նստում է մի ինչ որ բան մտածելու, ստեղծելու, նորան կաչկանդում են հարիւր ու մի կապանքներ, տանջում են անթիւ տարակուսանքներ. ինչ կը լինի, ով կը տալ փող, առանց որի ոչինչ չինել չի կարելի։ Մեր լանձնաժողովի անդամներն էլ հէնց այդպիսի դրութեան մէջ էին։ Մենք քրքրում էինք հարիւր ու մի կողմեր, նայում, որոնում էինք. մեր առաջը կոպէկներ էին գալիս... Այդ կոպէկները բազմացնելու չատ միջոցներ դտանք, բայց դարձեալ 1000 ռուբլու գումարից աւել բան չը ճարեցինք։ Հազար ռուբլի... Ի՞նչ կարելի էր անել այդ գումարով։ Բայց մենք չը լուսահատեցանք, չը թողեցինք մեր միտքը։ Յոյսեր ուրքան կային. մենք մինչև անգամ լոյս էինք դնում այն հանգամանքի վերայ, որ հարուստները կարող են մեռնել և մեզ գումարներ կտակել... Այդպիսի մի դժուար ժամանակ մեր ականջին լուր հասաւ, որ Մոսկուայում ապրող չուչեցի հարուստ եղբայրներ, լրագիրներից իմանալով մեր դիտաւորութիւնը, լայտնել են լօժարութիւն տարեկան 300 ռուբլի նպաստ տալ իգական արհեստագիտական դպրոցին։ Կարող էք երևակայել մեր ուրախութիւնը, մեր հրճուանքը, մենք թռչելու թեւեր էինք ստացել, մենք մեզ երջանիկ էինք համարում տեսնելով որ գործի սկզբում գտնում ենք այդպիսի մի համակրութիւն։ Ամուսհետև մնում էր մի 3 կամ 4 հարիւր ռուբլու ինդիրը. եթէ այդ գումարն էլ ունենանք, դործը վերջացրած է։ Մենք չատ ձգեցինք, չատ երկարացրինք մեր գտած միջոցները, ցաւելով տեսանք որ աւելացնելու բան չը կայ։ Կանգնած մնացինք։ Ի՞նչ անենք. մուռալներից ստանալիք արդիւնք, եկեղեցիներու հաւաքած գանձանակ, ծերնդեան տօնին «Աւետիք» ման գալ... Այդ բոլոր միջոցները չատ անգամ էինք հաշուել, նորից ինչպէս հաշուենք։ Էլրիկա, գտանք և այդ պակասի ճարը։ Մեզանից մէկը լայտնեց, որ Ընկերութիւնը Թիֆլիսում ունի կենդրոն, որ կառավարում է բոլոր ճիւղերը. մեր ցաւն ու դարդը, մեր հասարակութեան դրութիւնը ամենից լաւ այդ կենդրոնը կարող է հասկանալ. դիմենք նրան, խնդրենք 300 ռուբլի օժանդակութիւն. նա միջոցներ չատ ունի, նա չատ հեշտութեամբ կարող է մեզ օգնել։ Մեզանից ամեն մէկը աղատուեց հոդեկան տանջանքից. ամեն մէկը համոզուեց որ աշխարհիս երեսին ոչ մի հարց այսպիսի գեղեցիկ և ապահով լուծում չի ստացել։

Այնուհետև մենք կանչեցինք ընկերութեան քարտուղարին և սկսեցինք մի առ մի հասկացնել նրան թէ ինչպիսի թուղթ պիտի գրի Թիֆլիսի խորհրդին որ մեր խնդրած օժանդակութիւնը չը մերժի։ «Գրեցէք դրութեան մասին, ասում էինք մենք, գրեցէք մեր ընկերութեան աղքատութեան մասին, յայտնեցէք թէ ինչպիսի օգտակար հիմնարկութիւն է արհեստագիտական դպրոցը, ինչքան նա կը բարձրացնէ ընկերութեան անունը, ինչպէս նա կը հարկաւորէ մեր քաղաքացիներին վերջ ի վերջոյ գէն դնել անտարբերութիւնը և օգնել իրան։ Լաւ գրեցէք, աշխատեցէք համոզիչ խօսքեր ու փաստեր շատ դնել»։ Ամեն մէկը իւր իմացած հնարն էր առաջարկում այդ թղթին մին կախարդիչ կերպարանք տալու համար։ Քարտուղարը հեռացաւ և այնուհետև մեր գործը վերջացած էր։ Մենք ցրուեցանք։ Մի մանկական գրուածքում գիւղացին ասում է. «ես իմ անելիքը վերջացրի, սերմը դրի խոնաւ երկրի ծոցում, այժմ քո ողորմութիւնն է մնում, Տէր Աստուած»։ Այդպէս էինք ասում և մենք։

Թուղթը դնաց խորհրդին և այնուհետև մենք անհամբեր սպասում էինք պատասխանին. թէև համոզուած էինք որ պատասխանը բացասական չէր լինել, բայց մեզ համար շատ հետաքրքրելի էր իմանալ թէ այնտեղ, կենդրոնում ինչպէս են վերաբերւում մեր գործին, ինչ անուն են տալիս մեր դպրոցին և կանեն արդեօք մի փոփոխութիւն մեր կազմած ծրագրի մէջ։ Թիֆլիսում այդ բոլոր հարցերը պիտի վճռէր ընդհանուր ժողովը։ Նա կալացաւ, ձեռք առաւ մեր խնդիրքը և ինչ էք կարծում... Մի այնպիսի պատասխան տուեց, որ ամեն ինչ քանդեց, փչացրեց։ «Շուշին հարուստ քաղաք է, ասել էին ընդհանուր ժողովի լարգելի անդամները, մենք ինչու պիտի օժանդակութիւն տանք. թող իրանք, այդ հարուստները, պահեն իրանց դպրոցը»։ Բայց և այդպէս, ժողովը այդ հարցի վճիռը յանձնեց խորհրդին, որ կարող էր կարգադրել ինչպէս ուզում էր։ Խորհուրդն էլ, ղեկավարելով միևնոյն հայեացքներով, մի կտոր թղթով իմաց տուեց, որ դպրոցը Շուշու ընկերութիւնը կարող է իւր միջոցներով պահել... Դպրոցի միտքը իրաւ, ծրագիրը, մեր այնպիսի ոգևորութեամբ կազմած ծրագիրը իբրև մի անպէտք բան գործերի մէջ մնաց...

Ահա մեր գործը։ Եթէ ես այսքան մանրամասն նկարագրեցի այդ հարցը, նպատակս էր ցոյց տալ թէ ինչ ենք անում մենք մեզ համար։ Այստեղ այլ ևս չը կայ անհասկացող, անտարբեր ամբոխի հարցը. խնդիրը վճռւում էր այնպիսի շրջանների մէջ, որոնք ամենից լաւ պիտի հասկանան բառը իւր իսկական նշանակութեամբ. այդտեղ աւելորդ են խրատներ համերաշխութեան, շահերի ընդհանրութեան, գործի օգտակարութեան մասին։ Բայց ինչ եղաւ։ Հայը, յայտնի է, համերաշխութիւն բառը շատ է սիրում, բայց գործադրել ատում է։ Մի քաղաք 300 վերստ հեռու է միւս քաղաքից. մէկը ունևոր է, միւսը աղքատ. ունևորը աղքատին չի օգնում, պատճառ բերելով թէ նա իրանից հեռու է. չի օգնում այն ժամանակ,

երբ խնդրածը մի 3 հարիւր ռուբլի է։ Դա մի չնչին բան է ունևորի համար, բայց չունևորի համար երկնային օգնութիւն է, որը սպասում է անհամբերութեամբ։ Էլ ինչ գործ կարող է առաջանալ։ Եւ ինչպիսի զարմանալի հեշտութեամբ վճռւում է կենսական հարցը. քեզ մօտ կան հարուստներ, ինչու՞ ես մեզանից ուզում։ Կարծես թէ նոր պիտի հասկանանք թէ հարստութիւնը ալ բան է, հասարակական գործը ալ բան. եթէ հարստութիւնը միշտ ապահովութիւն տալ մեր հասարակական և ազգային հիմնարկութիւններին, այն ժամանակ էլ ինչու՞ պիտի դառանք թէ մեր գործերը փչանում են անօգնականութիւնից, անտարբերութիւնից. ինչու՞ պիտի դառանք, խենդեր չենք հօ... Նոր պիտի բացատրի թէ ամենափարթամ հարստութեան մէջ կարող է բարոյական, մտաւոր գործի, կատարեալ սով լինել... Հարուստը աղքատի համար լաւ չէ լոկ այն պատճառով որ լաւ ապրում է, իւղալի, գեղեցիկ կերակուրներ է սպառում. ոչ, հարուստը լաւ կը լինի այն ժամանակ, երբ կը հասկանայ որ աղքատն էլ ունի այս ու այն պակասութիւնը և ձեռք կը մեկնէ դէպի աղքատը... Սրանք մաչած, հարիւր ու հաղար անգամ քրքրւած մտքեր են։ Բայց մեզ համար երբէք պարզ չեն, և մենք դեռ վարագուրում ենք նոցա ետևը մեր անկարողութիւնը, մեր ուժասպառ դատարկութիւնը ծածկելու համար։

Դուք գոռում էք, պահանջում էք, բայց ինչ էք անում... Լաւ տեսէք։

Լ. Է Ο